Հովհաննես Թումանյան

Անհաղթ աքլորը

Լինում է, չի լինում՝ մի աքլոր է լինում: Էս աքլորը քուջուջ անելիս՝ մի ոսկի է գտնում: Կտուրն է բարձրանում, ձեն տալի .

Ծուղրուղո՜ւ, փող եմ գտ՜լ . . .

Թագավորը լսում է, իր նագիր վեզիրին հրամայում է՝ գնան, խլեն, բերեն:

Նագիր վեզիրը գնում են, խլում, բերում:

Աքլորը կանչում է .

Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձանով ապրե՜ց . . .

Թագավորը ոսկին ետ տալիս է իր նագիր վեզիրին, ասում է .

Ետ տարեք, իրեն տվեք, թե չէ՝ աշխարհքովը մին կխայտառակի մեզ էդ անպիտանը . . .

Նագիր վեզիրը ոսկին տանում են, ետ տալի աքլորին:

Աքլորն էլի կտուրն է բարձրանում .

Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձանից վախե՜ց . . .

Թագավորը բարկանում է, իր նագիր-վեզիրին հրամայում է .

Գնացե՛ք, ասում է, բռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրեցեք, եփեցեք, բերեք, ուտեմ, պրծնեմ ղրանից:

Նազիր վեզիրը գնում են աքլորին բռնում, որ տանեն: Տանելիս կանչում է .

Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձ հյուր է կանչե՜լ . . .

Տանում են, մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, ձեն է տալի . Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձ տաք տաք բաղնիք է ղրկե՜լ . . .

Եփում են, բերում թագավորի առաջն են դնում, կանչում է .

Թագավորի հետ սեղան եմ նստե՜լ, ծուղրուղո՜ւ . . .

Թագավորը շտապով վերցնում է, կուլ տալի: Կոկորդով գնալիս կանչում է .

Նեղ նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղո՜ւ . . .

Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլ չի ձենը կտրում, իր նազիր վեզիրին հրամայում է՝ թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի, զարկեն:

Նազիր վեզիրը թրերը հանած՝ պատրաստ կանգնում են, մինը՝ էս կողմը, մյուսը՝ էն:

Աքլորը, որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալի .

Լուս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՜ւ . . .

Զարկեցե՛ք . . . հրամայում է թագավորը:

Նազիր վեզիրը զարկում են, տալիս են, թագավորի փորը պատռում:

Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում, ձեն տալի .

Ծուղրուղո՜ւ . . .